ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N_____

Հասցեն. գ.Նորաշեն՝ փ-4, փկղ-3, շենք-12

Հեռ.093222994

«25» նոյեմբերի 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

25. նոյեմբերի 2019թ. N 25

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
/ ԶԵԿ. Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ / :

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի և ՀՀ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերի և 11-րդ հոդվածի պահանջներով , Նորաշեն համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել 2020թ. համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ տարեկան դրույքաչափերը:

1.Համայնքի տարածքում բացօդյա վաճառք կազմակերպելու թույլատվության համար՝

ա/ Գազի և վառելիքաքսայուղային նյութերի համար՝ ընթացիկ տարվա համար՝ 50000 դրամ:

բ/ Գյուղատնտեսական մթերքների համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 100դրամ:

2. համայնքի տարածքում ոգելից խմիչքների արտադրանքի վաճառքի թույլատվության համար՝

ա / Հիմնական շինության ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 դրամ :

բ/ Ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 1500 դրամ:

2.1 համայնքի տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլատվության համար՝

ա/ Հիմնական շինության ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 դրամ :

բ/ Ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար 1500 դրամ:

3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական

նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական)

շինարարության (տրամադրման) թույլատվության համար՝

Հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝

այգեգործական (ամառանոցային) տների , ինչպես նաև մինչև 200 քառ. մետր ընդհանուր

մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների

համար՝10000դ:

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 10000.0դր.

բբ/ 501-ից մինչև 1000 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

15000.0 դր:

բգ/ 1001-ից և ավելի քառ. մետր մակերես ունեցող օբյեկտների համար 20000.0դր.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ/ Մինչև 20 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող օբյետների համար՝ 3000 դր.: դ/ 20 և ավելի քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար `5000 դր.:

4.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար՝ 3000դր.:

5. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար 1000դր.:

6.Նոտարական ծառայություններ կատարելու , նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, փաստաթղթերի պատճեները հանելու և դրանից քաղվածքներ տալու համար 500դր., կտակը հաստատելու և բացելու համար 2000դր:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ- 5, դեմ-0, ձեռնպահ-0

Համայնքի ավագանու անդամներ.

Կողմ՝ ..... Ա.Գրիգորյան

Կողմ՝ ..... Խ.Հակոբյան

Կողմ՝ ..... Պ.Ավագյան

Կողմ՝ ..... Ա.Սարիբեկյան

Կողմ՝ ..... Ռ.Սահակյան

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ